

**Քաղաքացիական հավասարություն և ինտեգրման պետական ռազմավարություն**

**Ներածություն**

Ժողովրդավարության հաստատումն և զարգացումը Վրաստանի հասարակության և իշխանության հիմնական նպատակներից մեկն է, որին հասնելու համար անհրաժեշտ է անհատների միջև ապահովել իրավահավասարություն: Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և բազմազանության և պլյուրալիզմի (բազմակարծության) վրա հիմնված հասարակության աջակցությունը նշանակալիորեն կպայմանավորեն երկրի ժողովրդավարության աստիճանը և զարգացումը:

Վրաստանը բազմազգ երկիր է, որտեղ օրենքն յուրաքանչյուր մարդու շնորհում է հավասար իրավունք-պարտականություններ և պահպանում է նրա ինքնությունը: Վրաստանի ամեն մի քաղաքացի երկրի հզորության աղբյուրը և արժեքն է: Պատմության տարբեր փուլերում հիմնական ազգային խմբի՝ վրացիների հետ միասին, երկրի զարգացման մեջ նշանակալի դեր են կատարել նաև այլ ազգային խմբերի ներկայացուցիչները, ովքեր ներկայացնում են երկրի բնակչության (բացի Աբխազիայի և Ցխինվալի տարածաշրջանի/Հարավային Օսեթիայի) մոտավորապես 16%-ը: Նրանց մեծ մասը, առավելապես ազգությամբ հայերը և ադրբեջանցիները հոծ բնակվում են երկրի հարավում՝ Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում, ինչպես նաև արևելքում՝ Կախեթի տարածաշրջանում: Վրաստանն առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում իր անբաժանելի տարածքների, Աբխազիայի և Ցխինվալի տարածաշրջանում/Հարավային Օսեթիայում բնակվող բնակչության ինքնության պահպանմանը և քաղաքացիական ինտեգրմանը, քանզի այս տարածաշրջաններն այսօր բռնազրավված են Ռուսաստանի Դաշնության կողմից և գոյություն ունի այնտեղ բնակվող ազգային խմբերի ուժացման վտանգ: Համապատասխանաբար, ռազմավարության հիմնական կանխադրությունները նույնպես տարածվում են այս տարածաշրջաններում բնակվող բոլոր ազգային խմբերի, որպես Վրաստանի բնակչության անբաժանելի մասի վրա:

Ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջաններում ապահովված է ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանումը, թերևս որպես մարտահրավեր է մնում մնացած հասարակության հետ նրանց ինտեգրման ցածր աստիճանը, ինչը որոշակիորեն, այլ գործոնների հետ միասին, պայմանավորում է նաև խիտ վերաբնակեցում: Դրա հետ միասին, Վրաստանի

տարբեր քաղաքներում և տարածաշրջաններում բնակվում են որոշ, համեմատաբար փոքր ազգային խմբերի ներկայացուցիչներ, որոնք առավելապես լիարժեքորեն են ինտեգրված հասարակական կյանքի տարբեր ոլորտում, սակայն ունեն իրենց կենսակերպի պահպանության աջակցության կարիք:

Վերջին տարիների ընթացքում քաղաքացիական հավասարության տեսակետից երկիրը հասել է նշանակալից առաջընթացի: Ստեղծվել են իրավական երաշխիքներ և այս իրավական նորմերը իրականացնելու մեխանիզմները: Նմանապես պահպանված և պաշտպանված է ազգային փոքրամասնությունների մշակութային կենսակերպը: Սակայն գոյություն ունեն որոշակի կարիքներ և մարտահրավերներ քաղաքացիական ինտեգրման ընթացիկ գործընթացում, ինչին արդյունավետ արձագանքը կնպաստի երկրի բնակչության նշանակալից մասի կարողության լիովին իրացմանը և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, որպես Վրաստանի լիարժեք քաղաքացիների, իրավունքների իրականացմանը:

Սույն ռազմավարության նպատակն է ապահովել քաղաքացիական հավասարություն և ինտեգրում, որպեսզի Վրաստանի քաղաքացիները, առանց նրանց ազգային պատկանելության խտրականության, իրենց ավանդը ներդնեն երկրի տնտեսական զարգացման, քաղաքական և հասարակական կյանքում, ժողովրդավարորեն զարգացման գործընթացում: Քաղաքացիական հավասարության և ինտեգրման ապահովումն, իր հերթին կնպաստի երկրում ազգամիջյան և միջմշակութային խաղաղության և կայունության ապահովմանը:

Անհատների միջև հավասարության և քաղաքացիական ինտեգրման ապահովումը Վրաստանի Մահմանադրության և միջազգային պայմանագրերին, համաժողովներին համապատասխան երկրի կողմից ստանձնած դրական պարտականություն է, որը նախատեսում է ոչ միայն համապատասխան օրենսդրական տարածքի ստեղծում, այլև իրավունքների իրականացման օժանդակություն:

Վրաստանի իշխանությունն ըմբռնում է իր առջև կանգնած խնդիրներն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և ուժեղացման, ինչպես նաև քաղաքացիական հավասարության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության զարգացման աջակցության ուղղությամբ: Ազգային փոքրամասնությունների ուժեղացման ապահովման և ստանձնած դրական պարտականությունների կատարման համար հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի վարչակազմի ղեկավարությամբ մշակվեց սույն «Քաղաքացիական հավասարության և

ինտեգրման պետական ռազմավարությունը և 2015-2020 թ.թ. գործնական պլանը»:  
Այս ռազմավարության մեջ ձևավորված են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման ապահովման ռազմավարական և միջանկյալ նպատակները և սահմանված են այս նպատակներին հասնելու կառավարական գերատեսչությունների խնդիրները: Փաստաթղթի վավերականության ժամկետը սահմանվել է 5 տարի: Յուրաքանչյուր օրացույցային տարվա վերջին կմշակվի և Վրաստանի կառավարությանը կներկայացվի հաջորդ տարվա գործնական պլանը, որը հիմնված կլինի սույն ռազմավարության խնդիրների վրա և կարտացոլի հավելյալ կոնկրետ միջոցառումները: Բացի դրանից, ռազմավարությամբ սահմանված նպատակների և խնդիրների առավելագույն հաջող ձեռքբերումն ապահովելու համար նախատեսված է միջանկյալ և վերջնական գնահատում: Փաստաթղթի խնդիրն է աջակցություն ցուցաբերել հանրային հաստատությունների կողմից ազգային փոքրամասնությունների պաշտպանության ուղղությամբ իրականացվելիք գործունեությանը, ապահովել միջգերատեսչական համակարգված աշխատանքը, ձևավորել և իրականացնել միասնական, հաջորդական քաղաքականություն հասարակական կյանքի տարբեր ոլորտում ազգային փոքրամասնությունների ընդգրկվածությունը բարելավելու համար:

## **I. Քաղաքացիական հավասարության և ինտեգրման քաղաքականության տեսլական**

2005 թվականին միանալով «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Եվրոպական շրջանակային կոնվենցիային, Վրաստանը ստանձնեց պարտավորություն հարգել փոքրամասնությունների ազգային կենսակերպը և ստեղծել պատշաճ պայմաններ նրանց իրավունքների իրականացման համար: Այստեղից էլնելով, Վրաստանի քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը նպատակամղված է ապահովել քաղաքացիական համաձայնություն և հավասարություն, և ազգային կամ մշակութային բազմազանության պաշտպանության ճանապարհով արդյունավետորեն իրականացնել քաղաքացիական ինտեգրման քաղաքականություն: Ռազմավարությունը կողմնորոշված է ազգային, մշակութային կամ այլ նշաններից անխտիր, բոլոր քաղաքացիների համար ստեղծել հավասար հնարավորություններ:

Վրաստանի մշակութային բազմազանությունն ունի բազմադարյա ավանդույթ, հանդուրժողական համակեցության և զարգացման դրական փորձ: Բազմազանությունը ներկայացնում է երկրի հարստությունը և ժողովրդավարական և կայուն զարգացման ռեսուրսը: Դրա հետ միասին, քաղաքացիական ինտեգրման

գործընթացը հիմնվում է միջազգային փորձի և ազգային բազմազանության կառավարման միջազգային չափանիշերը սահմանող քաղաքական-իրավական կարգավորումների վրա: Վրաստանը, ինչպես ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների անդամ, պատրաստակամություն է հայտնում կիսել, ընդունել և Վրաստանի առանձնահատկության նկատառումով, կյանքում անցկացնել հաջողությամբ իրականացված միջազգային փորձը և կարգավորումները: Վրաստանը հավատարիմ է մնում 1999 թվականին Եվրոպայի խորհրդին անդամակցությամբ ստանձնած պարտավորություններին: Ռազմավարությունը ճանաչում է այլ միջազգային պայմանագրերը և փաստաթղթերը, այդ թվում.

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը,
- Կանանց նկատմամբ ամեն ձևի բռնությունը վերացնելու մասին կոնվենցիան,
- Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի հանձնարարականները և առաջնորդող սկզբունքները,
- ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների Գերագույն կոմիսարի Լունդի, Հաագայի, Օսլոյի, Լյուբլյանայի և Վարշավայի թեմատիկ հանձնարարականները և առաջնորդող սկզբունքները:

Ռազմավարությունը նաև նախատեսում է Վրաստանի և Եվրամիության միջև 2014 թվականին ստորագրված ասոցիացման մասին Պայմանագիրը, որի գլխավոր նպատակներից մեկը ժողովրդավարական բարեփոխումների անցկացումն է, այդ թվում ազգային փոքրամասնությունների իրավունքների և մշակութային բազմազանության պաշտպանության և ինտեգրման ուղիով: Ռազմավարությունն ամբողջությամբ հիմնվում է մոտեցման վրա, որը նախատեսում է ազգային փոքրամասնությունների քաղաքացիական հավասարության և բազմազանության կառավարման ապահովում: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականության ռազմավարությունը քննարկվում է Վրաստանի եվրոպական ընտրության և քաղաքական բարեփոխումների անցկացման ենթատեքստում:

Ռազմավարությունում նախատեսված են տարիների ընթացքում երկրում քաղաքացիական հավասարության տեսանկյունից կուտակված ձեռքբերումները, այդ թվում «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների գործնական պլանի» շրջանակներում առկա պրակտիկան, հաջողությունները և նաև մարտահրավերները<sup>1</sup>, ինչը պահանջում է համապատասխան արձագանք և

լուծում: Քաղաքացիական հավասարության և ինտեգրման ռազմավարությունը հիմնվում է այն տեսլականին, որը ենթադրում է բոլոր քաղաքացիների հավասարությունն ոչ միայն իրավական ոլորտում, օրենքով կամ օրենքի առջև, այլև իրատեսությունում, որպեսզի ապահովված լինի յուրաքանչյուր մարդու, որպես քաղաքացու, լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներին: Համապատասխանաբար, ռազմավարությունը հիմնվում է բազմակողմանի և կոմպլեքսային մոտեցման վրա:

Ռազմավարության հիմնական նպատակն է հասարակության յուրաքանչյուր անդամի մշակութային արժեքների և ինքնության պաշտպանությունը: Քաղաքացիական ինտեգրումը ենթադրում է բոլոր ազգային խմբերի ներկայացուցիչների լիարժեք մասնակցության համար ստեղծել պայմաններ: Այս նպատակով պետությունը կիրառում է միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող աջակցության և խրախուսման տարբեր մեթոդները: Պաշտպանությունը ենթադրում է ազգային և մշակութային ինքնագոյի պահպանում և ցուցադրում:

Գոյություն ունեցող ռազմավարությունը և գործնական պլանը նախատեսում են ակտիվ ինտերակցիա ոչ միայն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, այլ նաև վրացալեզու բնակչության հետ: Քաղաքացիական ինտեգրման գործընթացում կարևոր է հասարակության բոլոր անդամների մասնակցությունը և ընդգրկվածությունը: Ռազմավարության իրականացման գործընթացում Վրաստանի կառավարությունը սերտ կհամագործակցի Վրաստանի ժողովրդական պաշտպանի վարչակազմին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի, ոչկառավարական, միջազգային կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և փորձագետների հետ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի իմացության հարցը, ինչը վերստին շարունակում է մնալ լուրջ մարտահրավեր: 2002 թվականի տվյալներով, պետական լեզվին տիրապետում է ոչվրացալեզու բնակչության միայն 30%-ը:<sup>2</sup> Պետական լեզվի չիմացությունը նշանակալիորեն խոչընդոտում է նրանց լիարժեք մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին: Համապատասխանաբար, ռազմավարությունը պետական լեզվի իմացությունը քննարկում է որպես քաղաքացիական ինտեգրման հիմնական գործիքներից մեկը և ուղղված է վրաց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը:

## **II. Ռազմավարական նպատակներ**

Փաստաթղթում ձևակերպված նպատակները և խնդիրները արտացոլում են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության կարևոր նախադրյալը: Պետական քաղաքականության վերջնական նպատակն է երկարաժամկետ ապագայի համար օժանդակել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների պատշաճ ընդգրկվածությանը տարբեր համակարգում՝ լինի դա քաղաքական ինստիտուտներ, հանրային ծառայություն, քաղաքացիական հասարակություն, տնտեսություն, մասնավոր սեկտոր, թե կրթության ոլորտ: Ռազմավարական հիմնական նպատակները, այսինքն՝ ցանկալի երկարաժամկետ փոփոխությունը հասարակության մեջ, որոնց հասնելը պլանավորված է ներկայացված փաստաթղթով, հետևյալն են.

- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հավասարաչափ և լիարժեքորեն մասնակցում են քաղաքացիական և քաղաքական կյանքին,
- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ստեղծվել են հավասար սոցիալական և տնտեսական պայմաններ և հնարավորություններ,
- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մատչելի է որակյալ կրթությունը բոլոր մակարդակներով և բարելավված է պետական լեզվի իմացությունը,
- Պահպանվել է ազգային փոքրամասնությունների մշակույթը, խախուսվել է հանդուրժողական միջավայրը:

### **1. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին**

Քաղաքացիական հավասարության տեսակետից ռազմավարության նպատակ է ներկայացնում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական դիրքորոշման, հայացքների և գաղափարների հանրային քաղաքական զարգացման ապահովումը, ինչը նախատեսում է հավասարության սկզբունքների հաստատում և արդյունավետ իրականացում: Դրա հետ միասին ռազմավարությունն ուղղված է հավասար ընտրական միջավայրի ստեղծման կողմը և օժանդակում է ազգային փոքրամասնությունների կողմից մտածված ընտրության կատարմանը: Քաղաքացիական ինտեգրման ռազմավարությունը կողմնորոշված է, մի կողմից ազգային փոքրամասնությունների ձևական, քաղաքական տեսակետից ավելացած ներկայացուցչությանը և մասնակցությանը,

իսկ մյուս կողմից, ազգային փոքրամասնությունների համայնքների և հասարակության իրավական, մասնագիտական և ինստիտուցիոն հզորացմանը, ինչը հաջողված ինտեգրման քաղաքականության անցկացման որոշիչ նախապայմանն է:

Նշված նպատակի ապահովումը ներառում է հետևյալ ոլորտները.

- Քաղաքական ընդգրկվածության աճ,
- Քաղաքացիական մասնակցության բարելավում,
- Լրատվամիջոցների և տեղեկատվության մատչելիության աճ,
- Ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ գիտակցության բարձրացում:

Վերոհիշյալը տարածվում է երկրում գոյություն ունեցող ազգությամբ և մշակույթով տարբերվող բոլոր խմբերի, այդ թվում նաև փոքրաթիվ և ցրված բնակվող, կարիքավոր ազգային խմբերի վրա: Քաղաքացիական ինտեգրման գործընթացում նախատեսված է նաև գենդերային հավասարության ապահովման սկզբունքի արմատավորումը ազգային փոքրամասնությունների համայնքներում:

Անվանված ռազմավարական նպատակը կատարված կլինի հետևյալ միջանկյալ նպատակների կատարմամբ.

### 1.1. Փոքրաթիվ և կարիքավոր ազգային փոքրամասնությունների աջակցություն.

Առանձնահատուկ ուշադրություն է պահանջում փոքրաթիվ և կարիքավոր ազգային խմբերի հարցերով աշխատանքը: Փոքրաթիվ ազգային խմբերը ռազմավարության շրջանակներում դառնում են ընդհանուր քաղաքացիական ինտեգրման քաղաքականության մաս: Նրանց ընդգրկվածությունն ուժեղացնելու նպատակով պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում կստեղծվի փոքրաթիվ և կարիքավոր ազգային խմբերի հիմնախնդիրներն ուսումնասիրող աշխատանքային խումբ, որը կմշակի կոնկրետ հանձնարարականներ և միջոցառումներ այս խմբերի համար, կբարելավվեն նաև պետական ծրագրերի համակարգումը և ինստիտուցիոն կառավարումը:

Նշված միջանկյալ նպատակին հասնելու համար կարևոր խնդիր է ներկայացնում.

- Փոքրաթիվ և կարիքավոր ազգային փոքրամասնությունների խմբերի նկատմամբ քաղաքականության մշակումը և իրականացումը:

## 1.2. Գենդերային ուղղորդում

Գենդերային հիմնադրույթի արտացոլման տեսանկյունից ռազմավարությունը ներկայացնում է երկրի գենդերային քաղաքականությունը լրացնող փաստաթուղթ, որի նպատակն է ինչպես ազգային փոքրամասնությանը պատկանող կանանց իրավունքների պաշտպանությունը, անհրաժեշտությունների և ինտեգրման ապահովումը, այնպես էլ ՄԱԿ-ի՝ կանանց նկատմամբ բռնությունը վերացնելու կոմիտեի հանձնարարականների կատարումը: Գործնական պլանով նախատեսված են գենդերային նշանով անհավասարության վերացում և կանանց իրավունքների պաշտպանության աջակցություն, կանանց՝ հասարակական կյանքում ակտիվ մասնակցության աջակցություն և խրախուսում: Գենդերային հավասարության ապահովման գործընթացում նաև նախատեսված է տղամարդկանց ընդգրկվածությունը:

## 1.3. Պետական վարչարարության և իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների համար

Նշված նպատակին հասնելու համար կարևոր խնդիրներ են ներկայացնում. վարչական վարույթի, հետաքննության և դատարանների մատչելիության ապահովումը, իրավապահ մարմիններում և պետական լիազոր-նահանգապետի վարչությունների մակարդակով փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության բարելավումը, հասարակական սպասարկումների մատչելիության բարելավումը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ընդգրկվածության աճը հանրային վարչարարության մասնագետների նախապատրաստության և վերապատրաստման բոլոր մակարդակներով:

Այս տեսակետից նշանակալից մարտահրավեր է մնում ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի չիմացությունը կամ ոչպատշաճ տիրապետումը, ինչը, մի կողմից առաջացնում է նրանց տեղեկատվական մեկուսացում, իսկ մյուս կողմից վեր է ածվում նշանակալից խոչընդոտի իշխանության մարմինների հետ այնպիսի իրավական հարաբերությունների հաստատման գործընթացում, ինչպիսին է վարչական վարույթի նախաձեռնումը, տեղական ինքնակառավարման գործընթացներում ընդգրկվածությունը, արդարադատության իրականացումը և այլն: Համապատասխանաբար, իշխանությունների տարբեր մարմինների հետ հարաբերության բարելավման



նպատակով գործնական պլանը նախատեսում է այնպիսի միջոցառումներ, որոնք օժանդակում են գոյություն ունեցող պատնեշները հանելուն և կենտրոնական կամ իշխանության հետ իրավական հարաբերությունների բարելավմանը: Դրա հետ միասին, կարևոր է հանրային սեկտորում զբաղված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից պետական լեզվի իմացության բարելավման խրախուսումը:

Նշված միջանկյալ նպատակին հասնելու համար նշանակալից խնդիրներ են ներկայացնում.

- Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար վարչական վարույթի մատչելիության աճը,
- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության բարելավումը պետական լիազոր-նահանգապետերի վարչության մակարդակով,
- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հասարակական սպասարկումների մատչելիության բարելավումը,
- Հանրային վարչարարության և հանրային ծառայությունում, այդ թվում իրավապաշտպան մարմիններում, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության ավելացումը և մասնագիտական զարգացումը:

#### 1.4. Քաղաքական որոշումներ ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության խրախուսում

Վրաստանի բնակչության շրջանում ազգային փոքրամասնությունների տոկոսային ցուցանիշների համեմատությամբ, ցածր է նրանց ներկայացուցչության ցուցանիշը երկրի քաղաքական ինստիտուտներում: Քաղաքական որոշում ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության տեսակետից որոշիչ է, նախ և առաջ, Վաստանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի դերը, որը շարունակում է ընտրական վարչության նախապատրաստության շրջանակներում ազգային փոքրամասնությունների համայնքներից ներկայացուցիչներ գրավել ընտրական վարչության մեջ: Ընտրական իրավունքի հետ միասին ուշադրություն է հատկացվում նաև քաղաքական կուսակցություններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ գրավելու հարցին: Պլանավորված է նպատակաուղղված քաղաքականության անցկացում քաղաքական կուսակցությունների նկատմամբ, ինչը պետք է ապահովի

կուսակցական ցուցակներում ազգային փոքրամասնությունների ընդգրկումն ավելացնելու շահագրգռվածությունը: Նաև գործնական պլանով նախատեսված է քաղաքական կուսակցությունների կենտրոնական կամ տարածաշրջանային ներկայացուցչությունում գործող անդամների գիտակցության բարձրացումը քաղաքացիական ինտեգրման, ազգային փոքրամասնությունների քաղաքական ընդգրկվածության և բազմազանության կառավարման հարցերով:

Իսկ իրավական բազայի բարելավման նպատակով ռազմավարության շրջանակներում կստեղծվի հատուկ միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի ազգային փոքրամասնությունների քաղաքական մասնակցությանը օժանդակող միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող իրավական մեխանիզմները, կքննարկի Վրաստանում այս մեխանիզմների կիրառման հնարավորությունը և անհրաժեշտության դեպքում կպատրաստի համապատասխան նախաձեռնությունը:

Որոշում ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակիցների խրախուսման նպատակով, Եվրոպական փորձի հիման վրա, տարածաշրջանային և տեղական մակարդակով կձևավորվեն հասարակական խորհրդատվական խորհուրդներ, որոնց գործառույթը կլինի որոշումներ ընդունողների առջև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կարևոր հարցերի առաջադրումը, հանձնարարականների և եզրակացությունների նախապատրաստումը, կոնկրետ առաջարկությունների նախաձեռնումը, ինչպես նաև իշխանության այն որոշման կամ ծրագրի մոնիթորինգը և գնահատումը, որը այս կամ այն ձևով առնչվում է ազգային փոքրամասնությունների կարիքներին: Հասարակական խորհրդատվական խորհուրդները ձևավորվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, համայնքային ներկայացուցիչների և համապատասխան պետական կառույցների մասնակցությամբ:

Նշված միջանկյալ նպատակին հասնելու համար գործնական պլանով նախատեսված են հետևյալ խնդիրները.

- Ազգային փոքրամասնությունների կողմից ձայն տալու և իրազեկված ընտրություն կատարելու ապահովում,
- Ընտրական կուսակցական ցուցակների և քաղաքական կուսակցությունների գործունեությունում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության խրախուսում,

- Հանրային ծառայությունում ազգային փոքրամասնությունների մասնակցության աճ:

### 1.5. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար լրատվամիջոցների և տեղեկատվության մատչելիության բարելավում

Քաղաքացիական ինտեգրման գործընթացի հաջող ընթացքի համար առանձնահատուկ դեր է շնորհվում լրատվամիջոցներին, ինչպես ազգային փոքրամասնությունների թեմատիկայի լուսաբանման և դրանց ընդգրկվածության ապահովման տեսանկյունից, այնպես էլ լրատվամիջոցներում ատելության լեզվի կիրառման անթույլատրելիության, իսկ նմանի դեպքում, փաստերին շեշտակի արձագանքով: Այս ենթատեքստում պետությունը կհամագործակցի լրատվամիջոց-կազմակերպությունների հետ, որպեսզի նրանք միասին օժանդակեն հանրային հեռարձակման վարքի օրենսգրքի մասսայականացմանը, ինչը պարտավորեցնում է բոլոր հեռարձակողներին պաշտպանել հավասարության և ներողամտության սկզբունքները: Դրա հետ միասին, ազգային փոքրամասնությունների քաղաքական սոցիալականացման և ընդհանրապես քաղաքացիական ինտեգրման գործընթացում նշանակալից է նրանց մայրենի/հասկանալի լեզուներով տեղեկատվության մատչելիության բարելավումը և ընդգրկումը միասնական տեղեկատվական տարածքում: Սույն ռազմավարությունը լրատվամիջոցների և տեղեկատվության մատչելիության բաղադրիչի առաջատար գործառույթով պարտավորեցնում է հանրային հեռարձակմանը, որը պետք է օժանդակի ընթացիկ սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի մասին ազգային փոքրամասնությունների տեղեկացվածությանը, ինչպես նաև ընդհանուր ազգային, ժողովրդավարական արժեքների տարածման-հաստատմանը, ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերի մասին հասարակության իրազեկման աճին, ազգային փոքրամասնությունների թեմատիկայի լուսաբանման ժամանակ բարձր մասնագիտական չափանիշների արմատավորմանը:

Նշված միջանկյալ նպատակին հասնելու համար նշանակալից խնդիրներ են ներկայացնում.

- Ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդման ծրագրերի և էլեկտրոնային/տպագիր լրատվամիջոցների մատչելիության ապահովման օժանդակումը,
- Հաղորդման ծրագրերում ազգային փոքրամասնությունների թեմատիկայի լուսաբանման և փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովումը,

- Լրատվամիջոցներում հանդուրժողականության և մշակութային պլյուրալիզմին աջակցությունը:

## 1.6. Ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության ապահովում

Նշված նպատակին հասնելը նախատեսում է «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Եվրոպական շրջանակային-կոնվենցիայի և դրա կատարման վերաբերյալ հասարակությանը՝ ինչպես բնակչության մեծամասնության, այնպես էլ ազգային փոքրամասնությունների համայնքների իրազեկումը: Այս գործընթացը նաև ներառում է «Տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուների Եվրոպական խարտիայի» սկզբունքների մասին հասարակության տեղեկացվածության ապահովման նպատակով պետության կողմից լրատվական քարոզչության անցկացումը տարբեր թիրախային խմբերի, այդ թվում պետական լիազորների-նահանգապետերի վարչությունների, տեղական ինքակառավարումների, իրավապահ մարմինների և այլ հանրային հիմնարկությունների աշխատակիցների համար: Ինչպես նաև կիրականացվի շրջանակային-կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկում և համապատասխան գեկույցի պատրաստում-ներկայացում:

## 2. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում

Վրաստանի օրենսդրությամբ պաշտպանված է բոլոր քաղաքացիների սոցիալ-տնտեսական հավասարությունը: Մակայն մի շարք պատճառների հետևանքով (պետական լեզվի չիմացություն, աշխարհագրական գործոն, սոցիալական և քաղաքական մասնակցության ցածր մակարդակ) գոյություն ունի ռիսկ, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հայտնվեն ոչհավասար պայմաններում՝ սեփական տնտեսական իրավունքների իրականացման և սոցիալական քաղաքականությունից օգտվելու տեսակետից: Ճիշտ այդ պատճառով, ռազմավարությամբ նախատեսված են միջոցառումներ:

Քաղաքացիական ինտեգրման տեսանկյունից կարևոր է այնպիսի սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացումը, որոնք մեծացնում են ազգային փոքրամասնությունների հաղորդակցությունը վրացալեզու բնակչության և պետական մարմինների հետ, ինչպես նաև բարելավվում է նրանց համար սոցիալական ծառայությունների հասանելիությունը: Պետական հաստատություններն իրենց սեկտորային ռազմավարությունները մշակելիս և

սոցիալ-տնտեսական ծրագրերը և ծառայությունները իրականացնելիս՝ նկատառում են ազգային փոքրամասնությունների կարիքները:

Ռազմավարությունը հենվում է Վրաստանի և Եվրամիության միջև 2014 թվականին ստորագրված ասոցիացման մասին պայմանագրի վրա, որի կարևոր գլուխներից մեկը՝ «Զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ», նախատեսում է կարիքավոր խմբերի, այդ թվում ազգային փոքրամասնությունների համայնքների համար ընդգրկուն աշխատանքային շուկայի, սոցիալական անվտանգության համակարգի, սոցիալական պաշտպանության, սոցիալական ընդգրկվածության և հակախտրականության քաղաքականության վարում:

### 2.1. Սոցիալական և տարածաշրջանային շարժունակության աջակցություն

Ռազմավարությունը նախատեսում է ազգային փոքրամասնությունների սոցիալական և տարածաշրջանային շարժունակության աջակցություն: Այս նպատակին հասնելու համար ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ապահովված կլինեն ենթակառուցյի զարգացումը և զբաղվածության աջակցությունը, ինչպես նաև պետության սոցիալական ծրագրերի և ծառայությունների մասին տեղեկատվության նախաձեռնողական մատակարարումը նրանց հասկանալի լեզվով:

### 2.2. Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում

Ազգային փոքրամասնությունների մասնագիտական և չափահասների կրթությունը ապահովում է նրանց հարմարվածությունը աշխատանքի շուկային և զբաղվածության հնարավորությունը: Այս նպատակին հասնելու համար անվանված խնդրով նախատեսված են մասնագիտական ուսումնարաններում ազգային փոքրամասնությունների մասնակցության աճ՝ համապատասխան մեխանիզմներ մշակելու ճանապարհով, ինչը ենթադրում է անցկացված հետազոտությունների հիման վրա կարիքավոր խմբերի, այդ թվում ազգային փոքրամասնությունների համար մասնագիտական կրթության մատչելիությունը ավելացնելու նպատակով համապատասխան քաղաքականության մշակում-արմատավորում: Ազգային փոքրամասնությունների համար մասնագիտական կրթության լրիվ և հավասար մատչելիության ավելացման նպատակով նաև կարևոր է մասնագիտական կրթական հաստատությունների ցանցի

ընդարձակումը և որակյալ մասնագիտական կրթության մատուցման ապահովումը. երկրի զանգվածով նոր մասնագիտական կրթական հաստատությունների հիմնադրումը, քոլեջների համար ուսանողական ընդհանուր հանրակացարանների սարքավորումը, աշխատանքի շուկային կողմնորոշված մասնագիտական կրթական ծրագրերի առաջարկումը: Բացի վերը նշվածից, կարևոր է չափահաս բնակչության տարբեր մասնագիտական խմբերի համար պետական լեզվի ուսուցման մատչելիության ապահովում՝ համապատասխան խմբի կարիքներին հարմարեցված մեթոդի կիրառմամբ: Այս տեսակետից, պլանավորված է ՀԻԻԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի տարածաշրջանային ուսումնական կենտրոնների սպասարկումից օգտատերերի շրջանի ընդարձակում և հասարակության լայն շերտերի ընդգրկում, ուսուցիչների շարժուն խմբերի ստեղծում և գյուղի բնակչության համար լեզվի դասընթացների կազմակերպում: Նշանակալից է նաև այն, որ ազգային փոքրամասնությունների մասնագիտական զարգացման ծրագրերը համապատասխանեն ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման ընդհանուր քաղաքականությանը, իրականացվեն տարածաշրջանի տնտեսական զարգացման և աշխատանքային շուկայի համապատասխան մասնագիտական ծրագրեր:

### **3. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում**

Ներկայացված փաստաթուղթը միանգամայն կիսում է Վրաստանի կառավարության քաղաքականությունը կրթության և պետական լեզվի ոլորտում:

Ինչպես մինչդպրոցական, այնպես էլ ընդհանուր, մասնագիտական և բարձրագույն կրթության մատչելիության աճը և որակյալ կրթության մատակարարումը պետության առաջնահերթ նպատակն է, որը նշանակալիորեն պայմանավորում է իր քաղաքացիների շրջանում ազգային արժեքների տարածումը, տնտեսական բարօրությունը և երկրում քաղաքացիական հավասարության մշակույթի բարձրացումը:

Վրաստանում գործում է երկու հարյուրից ավելի ոչվրացալեզու դպրոց, ինչը նշանակալից ձեռքբերում է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության տեսակետից: Սակայն մարտահրավեր է մնում ոչվրացալեզու դպրոցներում կրթության որակը, մասնավորապես, դասագրքերի կատարելագործումը, ուսուցիչների որակավորման բարձրացումը, ինչը ամենակարևոր նախապայմանն է ազգային փոքրամասնությունների

քաղաքացիական, տնտեսական, քաղաքական և տարածաշրջանային ընդգրկվածության/մասնակցության ապահովման համար: Կրթական համակարգը ոչ միայն պայմանավորում է երկրի քաղաքացու սոցիալականացումը և ապագա մասնագիտական կարողությունները, այլև սերտ կապի մեջ է նաև պետական լեզվի ուսուցման հետ, ինչը այսօրվա դրությամբ քաղաքացիական ինտեգրման ցածր որակը պայմանավորող գլխավոր գործոններից մեկն է: Սույն ռազմավարությունը ներառում է կրթական քաղաքականությունը ոչ միայն հոծ բնակեցված, այլև ցրված բնակվող խմբերի նկատմամբ և կողմնորոշված է նաև այս վերջինների կարիքներին: Համապատասխանաբար, ազգային փոքրամասնությունների շահերի նկատառումով մշակված ավելի արդյունավետ միջոցառումների միջոցով փաստաթուղթը ստեղծում է որակյալ կրթության մատչելիության իրատեսական հնարավորություն:

### **3.1. Մինչդպրոցական կրթության մատչելիության աճ**

Նշված միջանկյալ նպատակին հասնելու համար կարևոր է մինչդպրոցական կրթության աստիճանին որակյալ կրթության ապահովում՝ ենթակառույցի բարելավման, ուսումնական ռեսուրսների ստեղծման և ուսուցիչների, վարչական անձնակազմի մասնագիտական զարգացման ճանապարհով:

Մինչդպրոցական կրթության մատչելիությունը և որակյալ մինչդպրոցական կրթությունն ամենականոն է ինչպես կոգնիտուր, սոցիալական ունակությունների և լիազորությունների, այնպես էլ լինգվիստական ունակությունների զարգացման և, համապատասխանաբար, դպրոցական կրթությանը նախապատրաստվելու համար: Այս տեսակետից կարևոր է, առաջին հերթին, մինչդպրոցական կրթության հատուկ ծրագրի մշակումը ուսուցման տարբեր մոդելով, զարգացման չափանիշերին համապատասխան դպրոցին նախապատրաստվելու ուսումնական պլանով: Մշակված ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է մինչդպրոցական հիմնարկություններում համապատասխան ենթակառույցի, ինչպես նաև ուսումնական ռեսուրսների ստեղծում: Կոչված նպատակին հասնելու համար նույնպես անհրաժեշտ է ղեկավարության և մանկավարժների օժանդակ ուսումնական ռեսուրսների նախապատրաստում, ուսուցիչների վերապատրաստում:

### **3.2. Որակյալ հանրային կրթության մատչելիության աճ ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզուներով**

Քաղաքացիական ինտեգրման նշանակալից նախապայման է ոչվրացալեզու դպրոցներում կրթության որակի բարելավումը և որակյալ կրթության մատչելիության ապահովումը՝ ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզուներով: Գործնական պլանով այս տեսակետից նախատեսված միջոցառումներն ուղղված են դեպի այնպիսի խնդիրների կատարումը, ինչպիսիք են. ազգային ուսումնական պլանի և դասագրքերի կատարելագործման և մատչելիության աճին աջակցությունը, ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացման աջակցությունը, դպրոցի վարչության մասնագիտական զարգացման և երկլեզու կրթության բարեփոխման աջակցությունը, պետական լեզվի ուսուցման բարելավման աջակցությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, ինչպես նաև նրանց մայրենի լեզվի պահպանման ապահովումը:

Կարևոր է, որ դպրոցական դասագրքերը արտացոլեն Վրաստանում գոյություն ունեցող բազմազանությունը և չպարունակեն կարծրատիպային կամ խտրականության տարրեր: Պետք է պատրաստվեն և հրատարակվեն բարելավված երկլեզու դասագրքեր: Գործնական պլանն այս ուղղությամբ բազմաթիվ միջոցառումներ է նախատեսում:

Որակյալ կրթության ապահովման ևս մեկ անհրաժեշտ նախապայման է ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումը: Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ենթատեսքտում նշվածը ենթադրում է նախ և առաջ ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման քաղաքականության մշակում, նրանց կողմից պետական լեզվի տիրապետում, ինչպես նաև ապագա ուսուցիչների պատրաստում: Անպայման և առաջնահերթություն է ինչպես ոչվրացալեզու դպրոցի ուսուցիչների, աշակերտների կողմից պետական լեզուն սովորելու ապահովումը, այնպես էլ նրանց մայրենի լեզվի պահպանության հոգատարությունը:

### 3.3. Բարձրագույն կրթության մատչելիության աճ

Կարևոր գերակայություն է ազգային փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչների համար Վրաստանում որակյալ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության ստեղծումը: Գործող արտոնյալ քաղաքականությունը (այսպես կոչված «1+4» սխեմա) նշանակալից ավանդ է ներդնում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավման գործում, համապատասխանաբար, այն կշարունակվի



և տեղի կունենա դրա հետագա կատարելագործում: Գործնական պլանով նախատեսված է Վրաստանի կրթության և գիտության նախարարության պարտավորությունը՝ վրաց լեզվի տիրապետման գնահատման համակարգի և պատշաճ գործիքների մշակումը: Նշանակալից է արտոնյալ սխեմայով շրջանավարտների ընդգրկումը ոչվրացալեզու դպրոցների ուսուցման գործընթացին, նաև այնպիսի համալսարանական ուսումնական ծրագրերի զարգացում-ֆինանսավորումը, որոնք ծառայում են ոչվրացալեզու դպրոցներում ընդհանուր կրթության որակի բարձրացմանը, մայրենի և պետական լեզուների ուսուցման և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների Վրաստանի գերակայող ոլորտներում զբաղվածությանը: Բարձրագույն կրթության արտոնյալ սխեման կշարունակվի այնքան ժամանակ, մինչև ոչվրացալեզու դպրոցներում բարձրանա վրաց լեզվի իմացության և ընդհանուր կրթության մակարդակը:

#### **4. Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողականության միջավայրի ապահովում**

Ռազմավարությամբ նախատեսված պաշտպանությունն ուղղված է ազգային փոքրամասնությունների մշակույթի և կենսակերպի բաղկացուցիչ տարրերի՝ լեզվի, ավանդույթների, ստեղծագործական նմուշների և մշակութային ժառանգության պահպանմանը և զարգացմանը: Դրա հետ միասին, ազգային փոքրամասնությունների մշակույթի ժողովրդականացումը նպաստում է *քաղաքացիական ինտեգրմանը*՝ բնակչության հիմնական մասում բազմազանության և հանդուրժողականության արժեքների հաստատմամբ:

Նշված ռազմավարության նպատակին հասնելու համար նշանակալից միջանկյալ նպատակներ են ներկայացնում.

- 4.1. Մշակույթի քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ ազգային փոքրամասնությունների դերի և նշանակության արտացոլումը,
- 4.2. Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պաշտպանությունը և մասսայականացումը,
- 4.3. Մշակութային բազմազանության խրախուսումը:

Նշված նպատակը ենթադրում է ազգային փոքրամասնությունների նյութական և ոչնյութական մշակույթի արժեքների պաշտպանության և զարգացման աջակցություն: Մասնավորապես, նկատառված են ազգային փոքրամասնությունների մշակութային հուշարձանների հաշվարկի և գույքագրման

շարունակումը, հուշարձանների ամրացումը և վերականգնումը, ինչպես նաև թատրոնների և թանգարանների գործունեության աջակցությունը, գրադարանների հանդուրժողականությունը միջմշակութային-կրթական ինտեգրման գործիքի տեսքով կիրառումը: Մշակութային բազմազանությունը նաև պարունակում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, հատկապես երիտասարդների կողմից վրացական մշակույթին ավելի լավ ծանոթացումը:

### **III. Ռազմավարության իրականացման, հաշվետվությունների, մոնիթորինգի և գնահատման ձևաչափերը**

Ռազմավարությանը կցված է գործնական պլան, որով նախատեսված են կոնկրետ խնդիրներ, ծրագրեր և ընդհանուր բնույթի միջոցառումներ 2015-2020 թվականների ժամանակաշրջանի համար: Դրա հետ միասին, յուրաքանչյուր տարվա վերջին պատասխանատու հաստատությունները կազմում են հաջորդ տարվա գործնական պլանը, որտեղ ձևավորված կլինեն կոնկրետ նախագծեր և միջոցառումներ՝ սույն ռազմավարությամբ նախանշված խնդիրներին և ընդհանուր միջոցառումներին համապատասխան, արդեն ձեռք բերված արդյունքների և բացահայտված թերությունների նկատառումով: Ռազմավարությամբ նախանշված խնդիրների և միջոցառումների իրականացման մոնիթորինգի և կատարված գործունեության մասին հաշվետվությունների ապահովման համար ստեղծվում է պետական միջգերատեսչական հանձնաժողով, որը կհամակարգի հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի վարչակազմը: Հանձնաժողովի կազմում ներկայացված կլինեն բոլոր այն հիմնական հանրային հաստատությունները, որոնց վրա դրվել են ռազմավարությամբ և գործնական պլան(ներ)ով նախատեսված խնդիրների և միջոցառումների կատարումը, այդ թվում Վրաստանի Արդարադատության նախարարությունը, Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը, Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը, Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարությունը, Վրաստանի սպորտի և երիտասարդության գործերի նախարարությունը, Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարությունը, Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունը, Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը, ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի և ք.Բաթումի մունիցիպալիտետի սակրեբուլոն, ՀԻԻԱ – Վրաստանի ներքին գործերի նախարարության Ոստիկանության ակադեմիան, ՀԻԻԱ – Դ.Աղմաշենեբելու անվան ազգային պաշտպանության

ակադեմիան, Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետերի վարչությունը, հանրային հեռարձակումը և Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Հանձնաժողովի աշխատանքին կընդգրկվի նաև Վրաստանի ժողովրդական պաշտպանի վարչակազմին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհուրդը: Պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում գործունեությունը կշարունակեն թեմատիկ աշխատանքային խմբերը: Այս ձևաչափը տալիս է այն բանի հնարավորություն, որ տարբեր հարցերի քննարկմանը ընդգրկվեն ոչկառավարական կազմակերպություններ, փորձագետներ և այլ շահագրգիռ անձինք:

Ռազմավարության և գործնական պլանի իրականացումն ապահովում են նշված պատասխանատու հաստատություններն իրենց լիազորությունների շրջանակներում:

Կարևոր հարց է ներկայացնում այն ռիսկ-գործոնների նկատառումը, որոնք կարող են խոչընդոտել ռազմավարության իրականացմանը: Նման գործոններ կարող են լինել միջազգային/տարածաշրջանային տնտեսական անկայունությունը, ինչը բացասաբար կարտացոլվի երկրի ֆինանսա-տնտեսական իրավիճակի վրա, ինչպես նաև տարածաշրջանում բացասական քաղաքական երևույթների զարգացումը կամ այլ ֆորս-մաժորային իրավիճակի ստեղծումը: Սակայն, մոտ անցյալը վկայում է, որ երկրում կամ նրա շրջանակներից դուրս զարգացած բացասական երևույթները/գործընթացները չեն խոչընդոտել կամ լուրջ վնաս չեն ստեղծել երկրում քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացմանը:

Ռազմավարության մշակման գործընթացին միացած էին ոչկառավարական, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, փորձագետներ և տարբեր ազգային փոքրամասնությունների խմբեր, որոնց կարիքների և հանձնարարականների նախատեսմամբ էլ ձևավորվեցին ռազմավարական և միջանկյալ նպատակները, ինչպես նաև համապատասխան խնդիրները և միջոցառումները: Համապատասխանաբար, գործնական պլանը նախատեսում է միջոցառումներ քաղաքացիական ինտեգրման քաղաքականության արդյունավետ իրականացման ուղղությամբ: Ազգային փոքրամասնությունների ընդգրկվածությունը նշանակալից կլինի նաև գործնական պլանի մոնիթորինգի և կատարման գնահատման գործընթացում: Վրաստանի ժողովրդական պաշտպանի վարչակազմին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհուրդը 2014 թվականի դեկտեմբերին ներկայացրեց այլընտրական մոնիթորինգի արդյունքները

«Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների գործնական պլանի» կատարման գնահատման մասին: Վրաստանի իշխանությունն ողջունում է գործնական պլանի կատարման այլընտրական մոնիթորինգի իրականացումը, համապատասխան գնահատման հաշվետվության և հանձնարարականների կիրառումն ինչպես ազգային փոքրամասնությունների խորհրդի, այնպես էլ այլ շահագրգիռ ակտորների կողմից:

Դրա հետ միասին, սույն ռազմավարությամբ նախատեսված են քաղաքացիական ինտեգրման և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցի գնահատման և մոնիթորինգի հավելյալ մեխանիզմները: Ռազմավարության գործողության ժամանակաշրջանում կանցկացվեն երկու համապարփակ գնահատում (քանակական և որակական), միջանկյալ և վերջնական գնահատում՝ ռազմավարության իրականացումն ավարտելուն պես: Գնահատման նպատակն է ռազմավարությամբ նախատեսված նպատակների և խնդիրների կատարման երկարաժամկետ ազդեցության ստուգում՝ նախապես մշակված, զիտականորեն հիմնավորված ցուցիչների կիրառմամբ, որոնք տալիս են համեմատության հնարավորություն: Գնահատում կանցկացվի բոլոր ռազմավարական նպատակների համար գործնական պլանով ձևավորված «Նպատակի ցուցիչների» համաձայն, որոնք կմշակվեն համապատասխան ճյուղի մասնագետների կողմից: Գնահատումը կանցկացնի պատշաճ փորձ ունեցող ակտորը: Դրա հետ միասին, յուրաքանչյուր տարվա վերջին հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի վարչակազմը, պետական միջգերատեսչական հանձնաժողովի անդամների հետ միասին, ապահովում է ռազմավարությամբ և տարեկան գործնական պլանով նախատեսված միջոցառումների մոնիթորինգը և հաշվետվությունը, դրանց կատարման «ցուցիչներին» համապատասխան: Մոնիթորինգի և գնահատման արդյունքները քննարկված կլինեն պատասխանատու հաստատությունների, ոչկառավարական և միջազգային կազմակերպությունների հետ միասին, որոնք կլինեն ինչպես պլանի կատարման դիտորդներ, այնպես էլ գործնական պլանով նախատեսված որոշակի միջոցառումների կատարողներ:

---

Վրաստանի բնակչության 2002 թվականի հանրաքվե, [www.geostat.ge](http://www.geostat.ge)

<sup>1</sup> «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և 2009-2014 թվականների գործնական պլանի» կատարման գնահատման փաստաթուղթ, հունիս 2014 (հասանելի է կայք-էջի վրա . [www.smr.gov.ge](http://www.smr.gov.ge)).

<sup>2</sup> Վրաստանի բնակչության 2002 թվականի համընդհանուր մարդահամար, [www.geostat.ge](http://www.geostat.ge)

